

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորատ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 3

21 փետրվարի 2019 թվականի

**«Աշխատանքի տնտեսագիտություն» և «Մարդկային ռեսուրսների կառավարում»
դասընթացների թեստային բազաները վերանայելու մասին**

Լսելով և քննարկելով «Աշխատանքի տնտեսագիտություն» և «Մարդկային ռեսուրսների կառավարում» դասընթացների թեստային բազաները վերանայելու մասին» հարցը՝ ռեկտորատը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հանձնարարել աշխատանքի տնտեսագիտության ամբիոնին՝ վերանայել «Աշխատանքի տնտեսագիտություն» և «Մարդկային ռեսուրսների կառավարում» դասընթացների թեստային բազաները՝ դրանցում բացառելով երկիմաստ, անորոշ և բառախաղ պարունակող ծուղակային հարցեր:
2. «Աշխատանքի տնտեսագիտություն» և «Մարդկային ռեսուրսների կառավարում» դասընթացներից անբավարար գնահատական ստանալու պատճառով ակադեմիական պարտքերի կրեդիտների գումարը՝ 12 կրեդիտը գերազանցած, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքով ընդունված և նշված դասընթացներից անբավարար գնահատական ստանալու պատճառով հեռացման ենթակա ուսանողներին ևս մեկ անգամ թույլատրել վերահանձնել վերոնշյալ դասընթացների քննությունները՝ մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքեր ունեցող ուսանողների վերահանձնումների ժամանակահատվածում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ռեկտորի պաշտոնակատար՝

Ռ. Ա. Հայրապետյան

2019 թ. փետրվարի 21

Երևան